# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՆԱՏԻՎԱ ՍՊԸ-ն ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/36 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Վերնաշապիկներ | Վերնաշապիկներ | Վերնաշապիկներ | ՍԱՄՏԵՔՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ | Երկարաթև վերնաշապիկը նախատեսված է ամենօրյա հարմարավետ հագնելու համար: Այն պատրաստված է փափուկ և շնչող կտորից, որն ապահովում է հարմարավետություն ինչպես տաք, այնպես էլ մեղմ եղանակին: Վերնաշապիկն ունի դասական` V-աձև վզկապ, վզկապի վերջնամասերը համապատասխան պլաստիկներով, որոնք ազատություն են տալիս շարժման ժամանակ, թևերի վերջնամասը 2 կոճակով: Կտորը հաճելի է մաշկին և պահպանում է իր ձևը բազմակի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | լվացումների ընթացքում: Վերնաշապիկը բաղկացած է 55% պոլիեսթերից և 45% բամբակից, իսկ խտությունը 110գր/մ2 +-5 գրամ: Դիզայնը և համապատասխան տպագրությունը չպետք է տարբերվի Հավելված 1.2-ով ներկայացված նկարից, իսկ կտորի գույնի կոդն է՝ #cfe5f7: Առջևի մասով՝ կոճակներ, երկարաթև, կոճակով թևանցք, ձախ կրծքավանդակին՝ Երևանի քաղաքապետարան, աջ թևին՝ Երևան զինանշան: Չափսերը S,M,L,XL,XXL՝ ըստ պատվերի: Առջևի ձախ մասում՝ տպագիր «Երևանի քաղաքապետարան» գրությամբ: Աջ թևի վրա՝ Երևանի զինանշանը և խորհրդանշական պատկերով տպագրություն («Երևանի քաղաքապետարան» գրությամբ): Վերնաշապիկի չափսերը համաձայն պատվիրատուի ներկայացված ցանկի, որը ներկայացնում է մինչև պայմանագիրը ուժի մեջ մտնելը էլ. ծանուցմամբ: Ապրանքը և կտորը պետք է լինի նոր չօգտագործված, ապրանքի հետ խնդիրների առաջացման դեպքում, որը կապված է ապրանքի որակի հետ, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Մատակարարը պարտավորվում է իր միջոցների հաշվին 2 աշխատանքային օրվա ընթացքում փոխել այն նորով: Պատվերի տեսքը դիզայնը նախապես պետք է համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարար ընկերությունը ամբողջ քանակի արտադրությունը սկսելուց առաջ պարտավոր է նախապես ներկայացնել մի քանի արդեն կարված պատրաստի նմուշ: Կից ներկայացվում են պահանջվող վերնաշապիկների չափսերը: Յուրաքանչյուր շապիկ պետք է լինի առանձին փաթեթավորված՝ թափանցիկ պոլիէթիլենային տուփով: Ներկառուցված պիտակ՝ չափս, բաղադրություն, լվացման նշաններ: Վերնաշապիկի մեջքի հատվածը լինի համապատասխան նախշերով: Վերնաշապիկի չափսերը ներկայացված են Հավելված 1.1-ում: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

НАТИВА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/36 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |